**Արձանագրություն N 7**
**ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Խ ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 08 մայիսի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը.
Հանձնաժողովի անդամներ Հ. Խաչատրյանը, Է. Բադալյանը, Ս. Աբազյանը և Ա. Մելքոնյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Խ ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից պայմանագիրը չներկայացնելու վերաբերյալ**

---

ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Խ ծածկագրով ընթացակարգի 15.04.2026թ. գնահատող հանձնաժողովի գնահատման նիստում կայացված որոշմամբ ընթացակարգի Չափաբաժին 6-ի մասով ընտրված մասնակից է հայտարարվել Տատյանա Սարգսյանին:

Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրել է էլեկտրոնային եղանակով 28.04.2026թ.: Մասնակիցը իրավերով սահմանված կարգով 5 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացել պայմանագրի ապահովումը:

**Հանձնաժողովի որոշումը**

---

Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Խ ծածկագրով ընթացակարգի 9.4 կետի՝ («9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու և ընտրված մասնակցի կողմից այդ պայմանն ընդունվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա **նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից**:») զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովը որոշեց ՋԿ-ԳՀԾՁԲ-26/3-Խ ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 6-ը հայտարարել չկայացած և հրապարակել ընթացակարգի Չափաբաժին 6–ի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ____________ | Վ. Օհանջանյան |
| անդամներ | ____________ | Հ. Խաչատրյան |
| | ____________ | Է. Բադալյան |
| | ____________ | Ս. Աբազյան |
| | ____________ | Ա. Մելքոնյան |
| Քարտուղար | ____________ | Ա. Սարգսյան |